ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի
2024թ. հոկտեմբերի 29-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից նիստին ներկա էին 27-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար տ.գ.թ., դոցենտ Հ.Մարգարյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. Նոր ընդունված հեռակա ասպիրանտների և հայցորդների թեմաների և ղեկավարների հաստատում
2. 2025/2026 ուստարվա ասպիրանտուրայի տեղերի հաստատման համար գիտական ուղղությունների երաշխավորման մասին
3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի հուշամեդալի շնորհման կանոնակարգի հաստատում
4. «ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի հուշամեդալ»-ով պարգևատրման որոշման կայացում
5. ԵՊՀ Տնտեսագիտության և ՄՏՀ ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Գրիգոր Հայրապետյանի հեղինակած «Համաշխարհային տնտեսություն» վերտառությամբ ուսումնական ձեռնարկի տպագրության երաշխավորման մասին
6. Ընթացիկ հարցեր

1. Նոր ընդունված հեռակա ասպիրանտների և հայցորդների թեմաների և ղեկավարների հաստատում

1.1 ԼՍԵՑԻՆ. Կառավարման և գործարարության ամբիոնի նոր ընդունված հայցորդի թեմայի և ղեկավարի հաստատման մասին հարցը:

1.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Կառավարման և գործարարության ամբիոնի նոր ընդունված հայցորդ Արմեն Աքիլեսի Մարտիրոսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ.,

դոցենտ Ա.Հակոբջանյանը՝ նշելով, որ ամբիոնի նիստում հաստատվել է հայցորդի թեման՝ «Սոցիո-մշակութային գործոնի կառավարման հիմնահարցերը կայուն զարգացման նպատակների համատեքստում», գիտական ղեկավար է հաստատվել՝ տ.գ.դ., պրոֆեսոր Հայկ Սարգսյանը:

2. Տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյանը, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը հարցեր հնչեցրեցին կապված թեմայի ուղղվածության և տնտեսական բաղադրիչի հետ, նաև հայցորդի բազային կրթության առնչությամբ:

3. Հայցորդ Ա.Մարտիրոսյանը հարցադրումներին պատասխանելով հիմնավորեց թեմայի ընտրությունը՝ մատնանշեց, որ Կայուն զարգացման 17 նպատակի և դրանց 169 յուրահատուկ թիրախների համար տնտեսական գործոններից զատ կարևոր նշանակություն ունեն նաև մշակութային ավանդույթներն ու սովորույթները: Հավելեց, որ շուրջ 32 տարի զբաղվում է գրահրատարակչությամբ և հանրության կյանքում առանձնակի կարևորում է մշակութային բաղադրիչի դերը:

4. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ վերջին շրջանում երկու Նոբելյան մրցանակ է շնորհվել Վարքագծային տնտեսագիտության գծով, ժամանակակից տնտեսագիտության մեջ այդ ուղղությունը մեծ դեր ունի և՛ սոցիումի, և՛ սոցիալի առնչությամբ, մշակույթը, ավանդույթը, վարքագիծն ու արժեքային համակարգը ևս կարգավորիչ գործառույթ ունեն: Հավելեց, որ ծավալված ակտիվ քննարկումը պայմանավորված է թեմայի ակտուալությամբ, մատնանշեց հայցորդի մեծ ավանդը գրահրատարակչության մեջ և առաջարկեց Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանի միջնորդությունը այս հարցի կապակցությամբ դնել քվեարկության:

1.1 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով «Կառավարման և գործարարության» ամբիոնի 24.10.24թ. թիվ 3 նիստի որոշումը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի նոր ընդունված հայցորդ Արմեն Աքիլեսի Մարտիրոսյանի՝ «Սոցիո-մշակութային գործոնի կառավարման հիմնահարցերը կայուն զարգացման նպատակների համատեքստում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, Ը. 00. 02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ: Գիտական ղեկավար հաստատել տ.գ.դ., պրոֆեսոր Հայկ Սարգսյանին:

Կառավարման և գործարարության ամբիոնի հայցորդի թեման և ղեկավարը հաստատվեցին՝ միաձայն քվեարկությամբ:

1.2 ԼՍԵՑԻՆ. Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի նոր ընդունված հեռակա ուսուցմամբ ասպիրանտի և հայցորդի թեմաների և ղեկավարների հաստատման մասին հարցը:

1.2.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի նոր ընդունված հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Արեգա Հարությունի Պռազյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանը՝ նշելով, որ ամբիոնի նիստում հաստատվել է ասպիրանտի թեման՝ «Մարդ-համակարգիչ փոխազդեցության կիրառումը ֆինանսական ռիսկերի գնահատման գործընթացում», գիտական ղեկավար է հաստատվել՝ տ.գ.դ., պրոֆեսոր Ռուբեն Գևորգյանը:

2. Հարցեր հնչեցրեցին տ.գ.դ., պրոֆեսոր Գ.Վարդանյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Բոստանջյանը, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը, տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյանը, տ.գ.թ., դոցենտ Գ.Մնացականյանը, տեխ.գ.թ., դոցենտ Հ.Զաքոյանը:

Հարցադրումներն առնչվում էին թեմայի վերնագրին, դրանից բխող էմպիրիկ, զուտ փորձնական կատարվելիք աշխատանքի և տեսության հետ կապին: Ակտիվ քննարկում ծավալվեց:

3. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ ֆակուլտետը մրցույթով 2 խոշոր դրամաշնորհ է շահել՝ «Մարդկային կապիտալի կառավարման հիմնահարցերը և լուծման ուղիները ՀՀ-ում» և «Մարդ-համակարգիչ փոխազդեցություն և ուսումնառություն»: Հավելեց, որ քննարկվող թեման դրանցից մեկի շրջանակում կատարվելիք հետազոտության մաս է կազմելու, և որ ձեռք են բերվելու անհրաժեշտ սարքավորումները դրամաշնորհի աշխատանքները սկսելու նպատակով:

4. Ասպիրանտ Ա.Պռազյանը հարցադրումներին սպառիչ և հակիրճ պատասխանելով նշեց, որ ղեկավարի հետ համատեղ ուսումնասիրել և շարունակում են ուսումնասիրել թեմային առնչվող հոդվածներ, հավելեց, որ քննարկվող թեմայի գործնական կանորությունն աշխարհում շատ մեծ է, աշխարհը գնում է «Մարդ-համակարգիչ փոխազդեցության» կիրառությունների բացահայտմանը, հավելեց նաև, որ հետազոտության թեմայի շրջանակում հաշվարկներ պետք է արվեն ֆինանսական մի քանի ոլորտներում:

5. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ հարցի ակտիվ քննարկումը կապված է վերնագրի հետ, առաջարկեց նախ, հաշվի առնելով քննարկումների ընթացքում հնչած փաստարկները, խմբագրել թեմայի վերնագիրը՝ «Մարդ-համակարգիչ փոխազդեցության կիրառումը կազմակերպությունների ֆինանսական ռիսկերի գնահատման գործընթացում», հետո Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանի միջնորդությունը այս հարցի կապակցությամբ դնել քվեարկության:

1.2.1 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով «Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման» ամբիոնի 23.10.24թ. թիվ 4 նիստի որոշումը և խորհրդի նիստում

արտահայտված կարծիքները՝ հաստատել ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի նոր ընդունված հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Արեգա Հարությունի Պռազյանի՝ «Մարդ-համակարգիչ փոխազդեցության կիրառումը կազմակերպությունների ֆինանսական ռիսկերի գնահատման գործընթացում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, Ը. 00. 08 «Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում» մասնագիտությամբ: Գիտական ղեկավար հաստատել տ.գ.դ., պրոֆեսոր Ռուբեն Գևորգյանին:

Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտի թեման և ղեկավարը հաստատվեցին՝ քվեարկության 25 կողմ, 0 դեմ, 2 ձեռնպահ արդյունքներով:

1.2.2. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի նոր ընդունված հայցորդ Հայկ Վարդանի Բաղդասարյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանը՝ նշելով, որ ամբիոնի նիստում հաստատվել է հայցորդի թեման՝ «Ջրային կուլտուրաների և անտառային տնտեսության զարգացման ազդեցության գնահատումը ՀՀ կայուն զարգացման վրա», գիտական ղեկավար է հաստատվել տեխ.գ.դ., պրոֆեսոր Արամ Առաքելյանը:

2. Հարցեր հնչեցրեցին տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Աբրահամյանը, տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյանը, տ.գ.թ., դոցենտ Վ.Ալեքսանյանը:

Հարցադրումները կրկին առնչվում էին թեմայի վերնագրին, «ջրային կուլտուրաներ» եզրույթի կիրառման և տնտեսության երկու ոլորտների համատեղ քննարկման նպատակահարմարությանը: Կրկին ակտիվ քննարկում ծավալվեց:

3. Հայցորդ Հ.Բաղդասարյանը հարցադրումներին պատասխանելով հիմնավորեց «ջրային կուլտուրաներ» եզրույթի և դրա կիրառման նպատակահարմարությունը:

4. Ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանը մատնանշեց, որ ամբիոնի նիստի ժամանակ թեմայի գիտական ղեկավարը հիմնավորել է վերոնշյալ երկու ոլորտների փոխկապվածությունը և հարժարվել դրանցից միայն մեկը դիտարկելու առաջարկից:

5. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ ֆակուլտետից հայտ է ներկայացվել ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված «Գիտական արդյունավետության խթանման դրամաշնորհային ծրագիր - 2025» մրցույթին՝ «Հայաստանի Հանրապետությունում ջրային կուլտուրաների արտադրության արդյունավետ զարգացման մոդելավորման նորարարական տեխնոլոգիայի մշակում» գիտական թեմայով, և որ հայտի հաստատման դեպքում քննարկվող թեման կատարվելիք հետազոտության մաս կկազմի, առաջարկեց նախ ներկայացված ձևակերպմամբ թեման հաստատել՝ ընդգծելով, որ հետագայում անհրաժեշտությունից ելնելով այն կարող է վերաձևակերպվել

ատեստավորման ժամանակ, հետո Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանի միջնորդությունը այս հարցի կապակցությամբ դնել քվեարկության:

1.2.2 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով «Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման» ամբիոնի 23.10.24թ. թիվ 4 նիստի որոշումը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի նոր ընդունված հայցորդ Հայկ Վարդանի Բաղդասարյանի՝ «Ջրային կուլտուրաների և անտառային տնտեսության զարգացման ազդեցության գնահատումը ՀՀ կայուն զարգացման վրա» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, Ը. 00. 08 «Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում» մասնագիտությամբ: Գիտական ղեկավար հաստատել տեխ.գ.դ., պրոֆեսոր Արամ Առաքելյանին:

Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի հայցորդի թեման և ղեկավարը հաստատվեցին՝ քվեարկության 25 կողմ, 0 դեմ, 2 ձեռնպահ արդյունքներով:

2. 2025/2026 ուստարվա ասպիրանտուրայի տեղերի հաստատման համար գիտական ուղղությունների երաշխավորման մասին

2.1 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի» առկա և հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի անվճար տեղերի 2025/2026 ուստարվա բուհական հայտերի ներկայացման նոր պահանջների համաձայն գիտական ուղղությունների հաստատման մասին հարցը:

2.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ 2025/2026 ուստարվանից ասպիրանտուրայի տեղերի հայտերի ներկայացման կարգը փոխվել է: Ղեկավարման իրավունք ունեցող յուրաքանչյուր անձ առցանց պետք է առավելագույնը 3 ուղղություն ներկայացնի, դրանց արդիականությունը, որպես գիտական ուղղություն նպատակահարմարությունը որոշելուց հետո Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը կհաստատի, ասպիրանտը կընտրի հաստատված ուղղություններից այն, որը նախընտրում է աշխատելու համար:

2. Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյանը ներկայացրեց ամբիոնի առկա և հեռակա ուսուցմամբ 2025/2026 ուստարվա ասպիրանտուրայի անվճար տեղերի հաստատման համար տ.գ.դ., պրոֆեսոր Թորոս Թորոսյանի ներկայացրած գիտական ուղղությունը՝ «ՀՀ արտաքին առևտրաֆինանսական հարաբերությունների կարգավորման և կատարելագործման

հիմնահարցերը»: Նշեց, որ ամբիոնի նիստում կայացված որոշման (կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) համաձայն առաջարկվող գիտական ուղղությունը ներկայացվում է ֆակուլտետի գիտխորհրդի քննարկմանը: Հավելեց նաև, որ տ.գ.դ., պրոֆեսոր Թ.Թորոսյանը պատրաստ է պատասխանել հարցերին:

Հարցեր չհնչեցին: Ելույթ ունեցողներ չեղան:

3. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը, հարցի քննարկումն ամփոփելով, առաջարկեց քվեարկությամբ երաշխավորել տ.գ.դ., պրոֆեսոր Թ.Թորոսյանի ներկայացրած գիտական ուղղությունը 2025/2026 ուստարվա ասպիրանտուրայի տեղերի հաստատման համար:

2.1 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով «Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների» ամբիոնի 23.10.24թ. թիվ 3 նիստի որոշումը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Թորոս Թորոսյանի ներկայացրած գիտական ուղղությունը՝ «ՀՀ արտաքին առևտրաֆինանսական հարաբերությունների կարգավորման և կատարելագործման հիմնահարցերը», երաշխավորել 2025/2026 ուստարվա առկա և հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի անվճար տեղերի հաստատման համար (27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

2.2 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Կառավարման և գործարարության» ամբիոնի առկա և հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի անվճար տեղերի 2025/2026 ուստարվա բուհական հայտերի ներկայացման նոր պահանջների համաձայն գիտական ուղղությունների հաստատման մասին հարցը:

2.2.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը ներկայացրեց ամբիոնի առկա և հեռակա ուսուցմամբ 2025/2026 ուստարվա ասպիրանտուրայի անվճար տեղերի հաստատման համար տ.գ.թ., դոցենտ Կառլեն Խաչատրյանի ներկայացրած գիտական ուղղությունները՝ «Մարդկային կապիտալի կառավարման հիմնահարցերը ՀՀ-ում», «ՀՀ սոցիալ-տնտեսական վերափոխումների և թվային փոխակերպումների փոխառնչությունները»: Նշեց, որ ամբիոնի նիստի միաձայն քվեարկությամբ կայացված որոշման համաձայն առաջարկվող գիտական ուղղությունները ներկայացվում են ֆակուլտետի գիտխորհրդի քննարկմանը: Հավելեց, որ հետազոտական ուղղությունների հիմնավորումները կցված են և տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը պատրաստ է պատասխանել հարցերին:

Հարցեր չհնչեցին: Ելույթ ունեցողներ չեղան:

2. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը, հարցի քննարկումն ամփոփելով, առաջարկեց քվեարկությամբ երաշխավորել տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանի ներկայացրած գիտական ուղղությունները 2025/2026 ուստարվա ասպիրանտուրայի տեղերի հաստատման համար:

2.2.1 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով «Կառավարման և գործարարության» ամբիոնի 24.10.24թ. թիվ 3 նիստի որոշումը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Կառլեն Խաչատրյանի ներկայացրած գիտական ուղղությունները՝ «Մարդկային կապիտալի կառավարման հիմնահարցերը ՀՀ-ում», «ՀՀ սոցիալ-տնտեսական վերափոխումների և թվային փոխակերպումների փոխառնչությունները», երաշխավորել 2025/2026 ուստարվա առկա և հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի անվճար տեղերի հաստատման համար (27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

2.2.2 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը ներկայացրեց ամբիոնի առկա և հեռակա ուսուցմամբ 2025/2026 ուստարվա ասպիրանտուրայի անվճար տեղերի հաստատման համար տ.գ.դ., պրոֆեսոր Հայկ Սարգսյանի ներկայացրած գիտական ուղղությունները՝ «Կայուն զարգացման հիմնախնդիրներ», «Տնտեսության օպտիմալ կառավարման և կարգավորման հիմնախնդիրներ»: Նշեց, որ ամբիոնի նիստի միաձայն քվեարկությամբ կայացված որոշման համաձայն առաջարկվող գիտական ուղղությունները ներկայացվում են ֆակուլտետի գիտխորհրդի քննարկմանը: Հավելեց, որ հետազոտական ուղղությունների հիմնավորումները կցված են:

2. Ելույթ ունեցավ տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Բոստանջյանը, մատնանշեց առաջարկվող գիտական ուղղությունների արդիականությունը և առաջարկեց ներկայացված երկրորդ գիտական ուղղությունը խմբագրել՝ օպտիմալ կառավարում եզրույթը փոխարինել արդյունավետ կառավարում եզրույթով:

3. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը, հարցի քննարկումն ամփոփելով, առաջարկեց խմբագրական փոփոխությամբ հանդերձ քվեարկությամբ երաշխավորել տ.գ.դ., պրոֆեսոր Հ..Սարգսյանի ներկայացրած գիտական ուղղությունները 2025/2026 ուստարվա ասպիրանտուրայի տեղերի հաստատման համար:

2.2.2 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով «Կառավարման և գործարարության» ամբիոնի 24.10.24թ. թիվ 3 նիստի որոշումը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Հայկ Սարգսյանի ներկայացրած գիտական ուղղությունները՝ «Կայուն զարգացման հիմնախնդիրներ», «Տնտեսության արդյունավետ կառավարման և կարգավորման հիմնախնդիրներ»,

երաշխավորել 2025/2026 ուստարվա առկա և հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի անվճար տեղերի հաստատման համար (27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

2.2.3 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը ներկայացրեց ամբիոնի առկա և հեռակա ուսուցմամբ 2025/2026 ուստարվա ասպիրանտուրայի անվճար տեղերի հաստատման համար տ.գ.դ., պրոֆեսոր Վահրամ Աբրահամյանի ներկայացրած գիտական ուղղությունները՝ «ՀՀ արդյունաբերության վերականգնում և զարգացում», «ՀՀ տրանսպորտի ոլորտի և լոգիստիկական համակարգի զարգացում», «ՀՀ միջազգային տարանցիկ տրանսպորտային ուղիների զարգացում»: Նշեց, որ ամբիոնի նիստի միաձայն քվեարկությամբ կայացված որոշման համաձայն առաջարկվող գիտական ուղղությունները ներկայացվում են ֆակուլտետի գիտխորհրդի քննարկմանը: Հավելեց, որ հետազոտական ուղղությունների հիմնավորումները կցված են և տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Աբրահամյանը պատրաստ է պատասխանել հարցերին:

2. Ելույթ ունեցավ տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյանը, կարևորելով առաջարկվող գիտական 3 ուղղությունների արդիականությունը նշեց, որ երրորդ ուղղությունն ուղղակիորեն առնչվում է Միջազգային տնտեսագիտությանը, հետևաբար որպես հետազոտական ուղղություն կարող է ընտրվել Ը. 00. 06 «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության համար:

3. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը, հարցի քննարկումն ամփոփելով, առաջարկեց ելույթում արված փաստարկումները հաշվի առնելով քվեարկությամբ երաշխավորել տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Աբրահամյանի ներկայացրած 3 գիտական ուղղություններից առաջին երկուսը 2025/2026 ուստարվա ասպիրանտուրայի տեղերի հաստատման համար:

2.2.3 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով «Կառավարման և գործարարության» ամբիոնի 24.10.24թ. թիվ 3 նիստի որոշումը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Վահրամ Աբրահամյանի ներկայացրած գիտական ուղղությունները՝ «ՀՀ արդյունաբերության վերականգնում և զարգացում», «ՀՀ տրանսպորտի ոլորտի և լոգիստիկական համակարգի զարգացում», երաշխավորել 2025/2026 ուստարվա առկա և հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի անվճար տեղերի հաստատման համար (27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

2.2.4 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը ներկայացրեց ամբիոնի առկա և հեռակա ուսուցմամբ 2025/2026 ուստարվա ասպիրանտուրայի անվճար տեղերի հաստատման համար տ.գ.դ., պրոֆեսոր Գագիկ Վարդանյանի ներկայացրած գիտական ուղղությունները՝ «Նորարարական

էկոհամակարգեր», «Բաց նորարարություններ»: Նշեց, որ ամբիոնի նիստի միաձայն քվեարկությամբ կայացված որոշման համաձայն առաջարկվող գիտական ուղղությունները ներկայացվում են ֆակուլտետի գիտխորհրդի քննարկմանը: Հավելեց, որ հետազոտական ուղղությունների հիմնավորումները կցված են և տ.գ.դ., պրոֆեսոր Գ.Վարդանյանը պատրաստ է պատասխանել հարցերին:

Հարցեր չհնչեցին: Ելույթ ունեցողներ չեղան:

2. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը, հարցի քննարկումն ամփոփելով, առաջարկեց քվեարկությամբ երաշխավորել տ.գ.դ., պրոֆեսոր Գ.Վարդանյանի ներկայացրած գիտական ուղղությունները 2025/2026 ուստարվա ասպիրանտուրայի տեղերի հաստատման համար:

2.2.4 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով «Կառավարման և գործարարության» ամբիոնի 24.10.24թ. թիվ 3 նիստի որոշումը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Գագիկ Վարդանյանի ներկայացրած գիտական ուղղությունները՝ «Նորարարական էկոհամակարգեր», «Բաց նորարարություններ», երաշխավորել 2025/2026 ուստարվա առկա և հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի անվճար տեղերի հաստատման համար (27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

2.3 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման» ամբիոնի առկա և հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի անվճար տեղերի 2025/2026 ուստարվա բուհական հայտերի ներկայացման նոր պահանջների համաձայն գիտական ուղղությունների հաստատման մասին հարցը:

2.3. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանը ներկայացրեց ամբիոնի առկա և հեռակա ուսուցմամբ 2025/2026 ուստարվա ասպիրանտուրայի անվճար տեղերի հաստատման համար տեխ.գ.դ., պրոֆեսոր Արամ Առաքելյանի ներկայացրած գիտական ուղղությունները՝ «Ֆինանսական ինստիտուտների զարգացման և տնտեսական աճի կապի արդյունավետության գնահատումը տնտեսական ազատականացման պայմաններում», «BRICS և NATO միությունների անդամ երկրների հետ ՀՀ համագործակցության միտումների գնահատումը»: Նշեց, որ ամբիոնի նիստում կայացված որոշման (կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) համաձայն առաջարկվող գիտական ուղղությունները ներկայացվում են ֆակուլտետի գիտխորհրդի քննարկմանը:

2. Ելույթ ունեցան տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Բոստանջյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Գ.Վարդանյանը, տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյանը: Տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա.Առաքելյանի առաջարկած երկրորդ գիտական ուղղության նպատակահարմարության հետ կապված ակտիվ քննարկում ծավալվեց:

3. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը, հարցի քննարկումն ամփոփելով, առաջարկեց քվեարկությամբ երաշխավորել տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա.Առաքելյանի ներկայացրած գիտական 2 ուղղություններից առաջինը 2025/2026 ուստարվա ասպիրանտուրայի տեղերի հաստատման համար:

2.3 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով «Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման» ամբիոնի 23.10.24թ. թիվ 4 նիստի որոշումը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի պրոֆեսոր, տեխ.գ.դ. Արամ Առաքելյանի ներկայացրած գիտական ուղղությունը՝ «Ֆինանսական ինստիտուտների զարգացման և տնտեսական աճի կապի արդյունավետության գնահատումը տնտեսական ազատականացման պայմաններում», երաշխավորել 2025/2026 ուստարվա առկա և հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի անվճար տեղերի հաստատման համար (26 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ):

3. ԼՍԵՑԻՆ. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի հուշամեդալի շնորհման կանոնակարգը հաստատելու հարցը:

3. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ սույն կանոնակարգի հաստատման նպատակը ֆակուլտետի գործընկերներին խրախուսելու հնարավորություն ունենալն է: Նշեց նաև, որ դեռևս ԵՊՀ որևէ ֆակուլտետ նման հուշամեդալ չունի: Հավելեց, որ «ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի հուշամեդալ»-ի շնորհումը սիմվոլիկ նշանակություն ունի, սակայն խթանող դերակատարում կունենա: Սույն կանոնակարգի նախագծի համաձայն, հուշամեդալը շնորհվում է դեկանի ներկայացմամբ և ֆակուլտետի գիտխորհրդի որոշմամբ՝ հուշամեդալը շնորհվում է ոչ թե միանձնյա, այլ կոլեգիալ որոշմամբ:

2. Հարցեր հնչեցրեցին տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը, տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյանը: Հարցերն առնչվում էին որպես պարգև հուշամեդալ ստացողների ցանկում ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ընդգրկված չլինելուն, սույն կանոնակարգի ստեղծման իրավական հիմքերին, նաև մեդալի գույնին, պատրաստման նյութին: Տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանն առաջարկեց նաև սույն կանոնակարգի 3.ա) կետում «լուրջ» բառը հանել:

3. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը հարցադրումներին պատասխանելով նշեց, որ այս պարգևը արտաքին շահակիցների համար է: Մատնանշեց, որ ֆակուլտետը համալսարանի ստորաբաժանումներից մեկն է, և նրա աշխատակիցների պարգևատրման գործընթացը կազմակերպվում է «Երևանի պետական համալսարանի պատվավոր կոչումների և պարգևների շնորհման» կանոնակարգով (հաստատված ԵՊՀ գիտական խորհրդի 2016 թ. հուլիսի 7-ի նիստում): Ըստ էության մեխանիզմը կա և գործում է, իսկ համալսարանական

չհամարվող շրջանավարտների և գործընկերների համար պարգևներ շնորհելու նման մեխանիզմ չկա: Հավելեց, որ կանոնակարգի ստեղծման համար իրավական հիմք են հանդիսացել ԵՊՀ կանոնակարգը և ֆակուլտետի կանոնադրությունը, իսկ հուշամեդալի նկարագրության մասով հղում կատարեց կանոնակարգ նախագծի 2-րդ էջին: Նշեց նաև, որ սույն կանոնակարգով պարգևները շնորհվելու են սահմանափակ քանակով:

4. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը, հարցի քննարկումն ամփոփելով, առաջարկեց կանոնակարգի 3.ա) կետում «լուրջ» բառը հանած կանոնակարգ նախագծի հաստատումը դնել քվեարկության:

3. ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի հուշամեդալի շնորհման կանոնակարգ նախագիծը՝ կանոնակարգի 3.ա) կետում «լուրջ» բառը հանած:

Կանոնակարգ նախագիծը հաստատվեց՝ քվեարկության 26 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ արդյունքներով:

4. ԼՍԵՑԻՆ. «ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի հուշամեդալ»-ով պարգևատրման որոշում կայացնելու հարցը:

4. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ հոկտեմբերի 31-ին Ֆակուլտետի հիմնադրման 90-ամյակին նվիրված հանդիսավոր նիստի ժամանակ նախատեսվում է պարգևատրել ֆակուլտետի որոշ գործընկերների: Առաջարկեց «ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի հուշամեդալ»-ով պարգևատրել 3 շրջնավարտի. ՀՀ ԿԲ նախագահ Մարտին Գալստյանին, ՀՀ նախկին փոխվարչապետ, Հայաստանի ամերիկյան համալսարանի Մանուկեան Սիմոն գործարարության և տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Վաչե Գաբրիելյանին, «Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ-ի գլխավոր գործադիր տնօրեն Հայկ Ստեփանյանին:

Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանի առաջարկությամբ ներկայացված շրջանավարտներին «ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի հուշամեդալ»-ով պարգևատրելու հարցը դրվեց քվեարկության:

4. ՈՐՈՇԵՑԻՆ. «ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի հուշամեդալ»-ով պարգևատրել ՀՀ ԿԲ նախագահ Մարտին Գալստյանին (27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ), ՀՀ նախկին փոխվարչապետ Վաչե Գաբրիելյանին (27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ) և «Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ-ի գլխավոր գործադիր տնօրեն Հայկ Ստեփանյանին (27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

5. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Գրիգոր Ռաֆայելի Հայրապետյանի հեղինակած «Համաշխարհային տնտեսություն» վերտառությամբ ուսումնական ձեռնարկը տպագրության երաշխավորելու վերաբերյալ հարցը:

5. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. ԵՊՀ Տնտեսագիտության և ՄՏՀ ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյանը նշեց, որ սույն ձեռնարկը նախատեսված է ֆակուլտետում դասավանդվող «Համաշխարհային տնտեսություն» դասընթացի համար: Ձեռնարկը գրախոսվել է ամբիոնի դոցենտներ, տ.գ.թ. Հ.Մարգարյանի և տ.գ.թ. Հ.Գալստյանի կողմից, ամբիոնի նիստում դրվել է քվեարկության: Ուսումնական ձեռնարկի գիտական խմբագիրն է ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Կառլեն Խաչատրյանը:

2. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մեթոդխորհրդի նախագահ, տ.գ.դ., պրոֆեսոր Գ.Վարդանյանը նշեց, որ ձեռնարկը հաջողված է և ուսանողներից բացի կարող են օգտագործել նաև դասավանդողները, ինչը կբարձրացնի դասընթացի ուսուցման արդյունավետությունը: Հավելեց, որ ֆակուլտետի մեթոդխորհուրդը տվել է դրական եզրակացություն:

3. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ հայալեզու ուսումնական ձեռնարկների ստեղծման աշխատանքները ողջունելի են, սույն ձեռնարկի հրատարակումը կօժանդակի «Համաշխարհային տնտեսություն» դասընթացի յուրացմանը: Մատնանշեց, որ երկու գրախոսների դրական կարծիքները, ամբիոնի որոշումը, ֆակուլտետի մեթոդխորհրդի դրական եզրակացությունը բավարար են ուսումնական ձեռնարկը տպագրության երաշխավորելու համար և առաջարկեց հարցը դնել քվեարկության:

5. ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի 02.10.24թ. թիվ 2 նիստի երաշխավորությունը, ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Գրիգոր Ռաֆայելի Հայրապետյանի հեղինակած «Համաշխարհային տնտեսություն» վերտառությամբ ուսումնական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

Ուսումնական ձեռնարկը երաշխավորվեց տպագրության՝ միաձայն քվեարկությամբ:

6. Ընթացիկ հարցեր

6.1 ԼՍԵՑԻՆ. Ֆակուլտետի հիմնադրման 90-ամյակին նվիրված հանդիսավոր նիստի օրակարգի մասին հարցը:

6.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը գիտական խորհրդի անդամներին ներկայացրեց հոկտեմբերի 31-ին Արամ Խաչատրյան համերգասրահում կայանալիք Ֆակուլտետի հիմնադրման 90-ամյակին նվիրված հանդիսավոր նիստի օրակարգը՝ ընդգծելով, որ բացի պրոֆեսորադասախոսական անձնակազմից ներկա են լինելու ԵՊՀ ղեկավար կազմը, ֆակուլտետների և ստորաբաժանումների ղեկավարները, պետական և մասնավոր ոլորտների ներկայացուցիչներ, ֆակուլտետի գործընկերները, շրջանավարտները և ուսանողները:

6.1 ՈՐՈՇԵՑԻՆ. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանի Ֆակուլտետի հիմնադրման 90-ամյակին նվիրված հանդիսավոր նիստի օրակարգի մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ